

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գորիս
29.03.2019թ. (քսանիննին մարտի երկու հազար տասնինը թվական)

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե»ի (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Խորենացու Փ. 3,7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ 02647057), ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ՍԿԴՎ համալիր հարկային ստուգումների թիվ 8 բաժնի պետ Գագիկ Հովակիմյանը (անձնագիր AM0369876, տրված 11.07.2011թ. 032-ի կողմից), այսուհետ՝ «Վարձակալ», մի կողմից, «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք», գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական)), այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս Վարչության նախագահ Արտակ Անանյանի, որի անունից հանդես է գալիս «Գորիս» մասնաձյուղի կառավարիչ Տիգրան Բարխուդարյանը ընդհանուր 19.05.1982թ., Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ. 006359673, տրված 17.08.2017թ. (տասնյոթը օգոստոսի երկու հազար տասյոթ թվական), 032-ի կողմից, բնակության/հաշվառման վայրի և փոստային հասցեն. ըՀայաստանի Հանրապետություն, քաղաք Գորիս, Գ. Նժդեհի փ., տ. 43, ով գործում է համաձայն 25.03.2019թ.-ին (քսանհինգին մարտի երկու հազար տասնինը) տրված № ԻԳ-780-4840 լիազորագրի մյուս կողմից,

Միասին անվանվելով՝ «Կողմեր», իսկ առանձին նաև՝ «Կողմ»,
ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ԲԱԺԻՆ Ի. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՈՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել՝ «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Գորիս, Գրիգոր Տաթևացու փողոց, թիվ 9 (ինը) վարչական շենք» հասցեում գտնվող անշարժ գույքի երկրորդ հարկից ընդամենը 472.3 (չորս հարյուր յոթանասուներկու ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով ոչ բնակելի տարածքը (այսուհետ՝ Վարձակալված տարածք), որի նկարագիրը տրվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հատակագծում:

Վարձակալված տարածքը տրամադրվում է Վարձակալին դրա նպատակային նշանակությամբ օգտագործվելու նպատակով:

1.2. Պայմանագիրը կնքվում է մինչև 2019 (երկու հազար տասնինը) թվականի դեկտեմբերի 31-ը (երեսունմեկը) ներառյալ:

1.3. Վարձակալված տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է Վարձատուի անվամբ, ինչը հաստատվում և հիմնավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2009թ.-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 2554053 վկայականով:

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ Վարձակալված տարածքը վեճի առարկա չէ, կալանքի տակ չի գտնվում, որևէ անձի հետ չի կնքվել օտարման, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման նախնական կամ նախավճարի պայմանագրեր:

1.5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 29.03.2019 թ. տրված No ՄՏ-29032019-09-0144 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի համաձայն «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Գորիս, Գրիգոր Տաթևացու փողոց, թիվ 9 վարչական շենք» հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ երրորդ անձանց անվամբ գրանցված անհատույց օգտագործման և վարձակալության իրավունքներ, գույքային իրավունքների գրանցված սահմանափակումներ չկան:

1.6. Վարձակալը իր յսով հաճանում է, որ սարքավորված է լինի, այն ընթացիկ վիճակից, դրա կապակցությամբ դիտողություններ կամ առարկություններ չունի, այն ընդունում է ինչպես կա՝ հրաժարվելով հետագայում հիշյալ հանգամանքների կապակցությամբ Վարձատուին պահանջներ ներկայացնելու իրավունքից:

ԲԱԺԻՆ II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Վարձակալից Վարձակալված տարածքն օգտագործել սույն Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան,

2.1.2. եթե Վարձակալը Վարձակալված տարածքից օգտվում է սույն Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծել սույն Պայմանագիրը և հատուցել վնասները,

2.1.3. առանց Վարձակալի գրավոր համաձայնության Վարձակալված տարածքը ծանրաբեռնել այլ գույքային իրավունքներով:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Վարձակալված տարածքը տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2. Վարձակալված տարածքը հանձնման-ընդունման ակտով տրամադրել Վարձակալին,

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել Վարձակալված տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.3. Վարձակալը պարտավոր է՝

2.3.1. Վարձակալված տարածքն օգտագործել սույն Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.3.2. ժամանակին վճարել Վարձավճարը՝ սույն Պայմանագրի 4-րդ բաժնում նշված կարգով ու պայմաններով.

2.3.3. Վարձատուի գրավոր համաձայնությամբ իր սեփական միջոցների հաշվին ժամանակին կատարել Վարձակալված տարածքի ընթացիկ և հիմնական վերանորոգումները.

2.3.4. ապահովել Վարձակալված տարածքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

2.3.5. Վարձակալված տարածքում պահպանել սանիտարահամաճարակային, հակահրդեհային պահպանության կանոնները, ինչպես նաև բոլոր այն կանոնները, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի և Վարձակալված տարածքի նկատմամբ.

2.3.6. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Վարձակալված տարածքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Վարձակալված տարածքին և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար.

2.3.7. ապահովել Վարձատուի կամ նրա ներկայացուցիչների անարգել մուտքը Վարձակալված տարածք՝ դրա զննման և ստուգման համար.

2.3.8. Վարձակալված տարածքի տիրապետման օգտագործման ընթացքում թերություններ հայտնաբերելիս իր սեփական միջոցներով վերացնել դրանք.

2.3.9. Վարձակալված տարածքն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

2.3.10. Վարձակալված տարածքը պահպանել պատշաճ վիճակում կրելով դրա համար բոլոր անհրաժեշտ ծախսերը:

2.4. Եթե Վարձակալված տարածքը Վարձակալի գործողություններով կամ նրա կողմից չձեռնարկված անհրաժեշտ միջոցների պատճառով կհայտնվի վթարային վիճակում, ապա Վարձակալը վերականգնում է այն իր ուժերով և իր սեփական միջոցների հաշվին կամ հատուցում է Վարձատուին պատճառված վնասը << գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով:

2.5. Վարձակալն իրավունք չունի առանց Վարձատուի գրավոր համաձայնության Վարձակալված տարածքը հանձնելու ենթավարձակալության, սույն Պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, Վարձակալված տարածքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավ դնել կամ որպես

ավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում:

ԲԱԺԻՆ III. ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆԱԿԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

- 3.1. Սույն Պայմանագրի կնքման պահին Վարձակալված տարածքը գտնվում է Վարձակալի փաստացի տիրապետման ներքո: Վարձակալված տարածքի հանձնում-ընդունումը Վարձատուին հետ վերադարձնելու դեպքում կատարվում է մինչև սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտման ամսաթիվը կամ սույն Պայմանագիրը լուծված համարվելու ամսաթիվին:
- 3.2. Վարձակալված տարածքի հետ հանձնում-ընդունումը կատարվում է հանձնման-ընդունման ակտով: Վարձակալված տարածքը համարվում է հետ հանձնված/ընդունված հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:
- 3.3. Վարձակալված տարածքի հետ հանձնման-ընդունման ակտերը ստորագրում են Կողմերի լիազորված անձիք:

ԲԱԺԻՆ IV. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ

- 4.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված Գույքի ամսական վարձավճարը կազմում է 188920 (մեկ հարյուր ութսունութ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ, ներռյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկերի և պարտադիր այլ վճարների:
- 4.2. Սույն պայմանագրի 4.1. կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-րդ աշխատանքային օրը, իսկ 2019թ.-ի դեկտեմբեր ամսվա համար, մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը: Ընդ որում, 2019 թվականի հունվար ամսից մինչև մարտ ամսվա համար վարձավճարը ենթակա է վճարման ապրիլ ամսվա համար վարձավճարի հետ միասին:
- 4.3. Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 4.4. 2019 թվականի համար վճարման ժամանակացույցը կցվում է սույն Պայմանագրին /Հավելված 1/ և համարվում է պայմանագրի անբաժանելի մաս:
- 4.5. Կապի, էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման և աղբահանության ծառայությունների հետ կապված ծախսերը ներառված են 4.1 կետով սահմանված վարձավճարի արժեքում և կատարվում են Վարձատուի կողմից ինքնուրույն ձևով՝ համաձայն նման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի:
- 4.6. Սույն պայմանագրով կողմերի ստանձնած իրավունքները և պարտականությունները տարածվում են 01.01.2019 թվականից ծագած հարաբերությունների վրա: Սույն Պայմանագրով սահմանված վճարումները կիրականացվեն լիազոր մարմնի կողմից պայմանագիրը հաշվառելուց հետո սույն Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ժամանակացույցին և սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

ԲԱԺԻՆ V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Սույն Պայմանագրով նախատեսված վարձավճարի վճարման ժամկետները խախտվելու դեպքում Վարձատուն իրավունք ունի Վարձակալին ներկայացված գրավոր պահանջով պահանջելու վճարել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված վարձավճարի 0.1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:
- 5.2. Տուժանքի վճարումները Կողմերին չեն ազատում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելուց:

ԲԱԺԻՆ VI. ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՐԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

- 6.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ ուծել, եթե Վարձակալը՝
 - 6.1.1. գույքը օգտագործվել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:
 - 6.1.2. էականորեն վատթարացել է Գույքի վիճակը:

6.1.3. Սույն պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո 2 անգամից ավելի չի մուծել վարձավճարը:

6.2. Վարձակալի 1 ամիս առաջ գրավոր պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տվրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն համապատասխան օգտագործելու համար:

6.2.2. Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանն խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել պայմանագիրը կնքելիս:

ԲԱԺԻՆ VII. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումներում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

7.2. Պայմանագիրը կարող է դադարել Կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած ժամկետում:

7.3. Պայմանագրով կատարվող փոփոխությունները և լրացումները Կողմերը քննարկում են տասնօրյա ժամկետում, որոնց վերաբերյալ, եթե ձեռք է բերվել ընդհանուր համաձայնություն բոլոր էական պայմանների շուրջ, կնքվում է լրացուցիչ համաձայնագիր: Կողմերի համար լրացուցիչ համաձայնագիրը իրավաբանական ուժ ունի, եթե այն վավերացվել է նոտարի կողմից:

7.4. Եթե սույն Պայմանագրի ցանկացած դրույթ որևէ պատճառով անվավեր, ուժ չունեցող, անիրագործելի կամ անօրինական է, ապա այն չպետք է ազդի մնացած ցանկացած կամ բոլոր դրույթների վավերականության կամ իրագործելիության վրա: Կողմերը համաձայնում են, որ եթե սույն Պայմանագրի ցանկացած դրույթ լինի անվավեր կամ անիրագործելի, նրանք բարեխղճորեն պետք է անմիջապես բանակցություններ սկսեն՝ այդ դրույթը այնպես փոփոխելու համար, որ արդյունքում այն լինի վավերական ու օրինական և հնարավորին առավելագույն չափով արտահայտի Կողմերի սկզբնական մտադրությունները այդ հարցում կամ հարցերում:

7.5. Սույն Պայմանագրի կնքման պահից Կողմերը չեն կարող հրաժարվել սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան կատարելուց:

7.6. Սույն Պայմանագիրը պարունակում է Կողմերի միջև հաստատված, սույն Պայմանագրի առարկային վերաբերող ամբողջական համաձայնությունը: Կողմերը համաձայնում են, որ գոյություն չունեն այլ հայտարարություններ, երաշխավորագրեր, պայմաններ, երաշխիքներ կամ փոխադարձ համաձայնություններ, բացի նրանցից, որոնք նշված են սույն Պայմանագրում:

7.7. Կողմերը երաշխավորում են, որ սույն Պայմանագրի պայմանները չեն խախտում երրորդ անձանց իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը և սահմանում են բացառապես իրենց իրական կամքը:

7.8. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում չչ դատարանների միջոցով՝ չչ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.9. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերը հայտարարում են, որ իրենք իրավունակ և գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում սույն Պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստն ու նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ սույն Պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով՝ ի նպաստ իրենց շահերի և նպատակների:

7.10. Կողմերը հայտարարում են՝

7.11. ա) որ իրավասու են կնքել և իրականացնել սույն Պայմանագիրն առանց օրենքի կամ պայմանագրային սահմանափակումների կամ այլ անձանց իրավունքների խախտման,

7.12. ք) որ սույն Պայմանագիրն ուժի մեջ է և իրավաբանորեն պարտավորեցնում է իրենց ու պարտադիր է իրենց համար:

7.13. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կան վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

7.14. Պայմանագիրը ենթակա է նոտարի կողմից վավերացման: Պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձատուի կողմից, իսկ վարձակալության իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերը՝ Վարձակալի կողմից:

7.15. Սույն Պայմանագիրը կնքված է հայերենով, 4 (չորս) օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, մեկ օրինակ նոտարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

7.16. Սույն Պայմանագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գործող նորմերը:

7.17. Սույն Պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

ԲԱԺԻՆ IX. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆԿԵԼՈՒ/ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐՉԱՏՈՒ

«Արդշինբանկ» ՓԲԸ

Ք. Երևան, Գ. Լուսավորչի փողոց 13, 13/1

ՀՎՀՀ 02566492

Հ/Հ՝ 2470036863310000 «Արդշինբանկ» ՓԲԸ

լ/ա՝ Տիգրան Բարխուդարյան

ՀՀ նույնականացման քարտ. 006359673,

տրված 17.08.2017թ., 032-ի կողմից, Հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, քաղաք

Գորիս, Գ. Նժդեհի փ., տ. 43

«ՎԱՐՉԱԿԱԼ»

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7

ՀՎՀՀ 02647057

Հ/Հ՝ 900013574018

Կենտրոնական գանձապետարան


Գործառնական վարչություն


ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի

լիազորված անձ Գագիկ Հովակիմյանի

անձնագիր AM 0369876, տրված 11.07.2011թ.

032-ի կողմից


S. Բարխուդարյան
(ստորագրություն)


Գ. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված 1
 ապրիլի 2019թ. Կազմված և սեղանամատյանում թիվ __ համարով
 գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագիր

Վճարման ժամանակացույց


«Ն» դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՊԵԿ 2019թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	ք Գորիս, Գ. Տաթևացու փողոց, թիվ 9 վարչական շենքի վարձակալություն	755,680	944,600	1,133,520	1,322,440	1,511,360	1,700,280	1,889,200	2,078,120	2,267,040	2 267 040

*Վճարման ժամանակացույցի գումարները ներկայացված են աճողական կարգով

ՎԱՐՉԱՏՈՒ
 «Արդշինբանկ» ՓԲԸ
 Ք. Երևան, Գ. Լուսավորչի փողոց 13, 13/1
 ՀՎՀՀ 02566492
 Հ/Հ՝ 2470036863310000 «Արդշինբանկ» ՓԲԸ
 /ա՝ Տիգրան Բարխուդարյան
 ՀՀ նույնականացման քարտ. 006359673,
 տրված 17.08.2017թ., 032-ի կողմից, Հասցե՝
 Հայաստանի Հանրապետություն, քաղաք
 Գորիս, Գ. Նժդեհի փ., տ. 43

«ՎԱՐՉԱԿԱԼ»
 ՀՀ պետական եկամուտների կոմիտե
 ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
 ՀՎՀՀ 02647057
 Հ/Հ 900013574018
 Կենտրոնական գանձապետարան
 Գործառնական վարչություն
 ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի
 լիազորված անձ Գագիկ Հովակիմյանի
 անձնագիր AM 0369876, տրված 11.07.2011թ.
 032-ի կողմից


 _____ **Տ. Բարխուդարյան**
 (ստորագրություն)


 _____ **Գ. Հովակիմյան**
 (ստորագրություն)



Երկու հազար տասնինը թվականի մարտի քսանինին սույն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ «Սյունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար Առնո Գրիգորի Առաքելյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ վարձատուի սեփականության իրավունքը ստուգված է:

ՀՀ Քաղ. Օրենսգրքի 135 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում 931

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնինգ հազար ՀՀ դրամ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Առնո Գրիգորի Առաքելյան

